ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝ Արման Պողոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիայի Հանրապետություն (ք. Վիեննա), 2022թ. նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը

4. Հրավիրող կողմը՝ Համաշխարհային բանկի ֆինանսական հաշվետվողականության բարեփոխումների կենտրոն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն «Ֆինանսական և կայունության հաշվետվողականություն՝ հանուն պարտքի թափանցիկության և կայուն վերականգնման» խորագրով 2022 թվականի նախարարական համաժողովին նվիրված միջոցառումներին:

6. Քննարկված թեմաները՝

- Ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվողականության օգտագործումը՝ հանրային և կորպորատիվ հատվածներում մարտահրավերները հաղթահարելու նպատակով.
- Ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվության կարևորությունը ճգնաժամային իրավիճակներում.
- Ֆինանսական հաշվետվողականության և կայունության հաշվետվողականության ոլորտներում արդի զարգացումները.
- Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում բարեփոխումների կարգավիճակը.
- Արտաքին աուդիտի և էթիկայի ոլորտներում արդի զարգացումները.
- Պարտքի կառավարման թափանցիկություն և հաշվետվողականություն.
- Էլեկտրոնային նորարարությունները՝ ճգնաժամերին արձագանքելու, վերականգնման և հաղորդակցման նպատակով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մասնակցություն «Ֆինանսական և կայունության հաշվետվողականություն՝ հանուն պարտքի թափանցիկության և կայուն վերականգնման» խորագրով նախարարական պանելային քննարկմանը՝ ներկայացնելով ՀՀ-ում աուդիտի և հաշվապահական հաշվառման ոլորտներում իրականացված բարեփոխումները, ինչպես նաև ոլորտներում առկա հիմնական մարտահրավերներն ու առաջիկա անելիքները: Պանելային քննարկմանը մասնակցություն են ունեցել Հյուսիսային Մակեդոնիայի և Կոսովոյի ֆինանսների նախարարները, Ուկրաինայի

ֆինանսների նախարարի տեղակալը, Համաշխարային բանկի բարձրաստիճան պաշտոնյաներ:

8. Հանդիպման արդյունքները և առաջարկությունները

Համաժողովին հյուրընկալվել են մոտ 250 բարձրաստիճան պատվիրակներ, այդ թվում՝ ֆինանսների նախարարներ, այլ պետական պաշտոնյաներ, զարգացման միջազգային գործընկերներ, հանրային և մասնավոր հատվածի, մասնագիտական և ակադեմիական համայնքների բարձր մակարդակի ներկայացուցիչներ, ինչպես նաև փորձագետներ՝ ԵՄ և միջազգային առանցքային հաստատություններից:

Համաժողովի մասնակից երկրների ներկայացուցիչների միջև տեղի են ունեցել տարաբնույթ քննարկումներ՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում բարեփոխումների իրականացման փորձի փոխանակման նպատակով:

9. Գործուղվողը

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյան:

Recoverable Signature

X

ԱՐՄԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN ARMAN 3809820482

10. Ստորագրությունը, ամսաթիվը 06.12.2022թ.